| | |
|---|---|
| Ծրագրի անվանումը | Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրի 488 մետր ներքին ցանցի կառուցում |
| Մարզ | Գեղարքունիք |
| Համայնքը /համայնքները | Վարդենիս |
| Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից | .175կմ, 75կմ |
| Համայնքի /բնակավայրի բնակչությունը | Վարդենիս՝ 39162<br><br>Սոթք բնակավայր՝ 1039 |
| Սահմանամերձ համայնք/բնակավայր | Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրը սահմանամերձ է |
| Բարձր լեռնային համայնք /բնակավայրի | Բարձրլեռնային |
| Ծրագրի ընդհանուր նկարագրությունը, դրա իրականացման անհրաժեշտությունը, ակնկալվող արդյունքները, գործողությունները և շահառուներ | Վարդենիս համայնքը գյուղատնտեսական համայնք է, եկմտի հիմնական աղբյուրը գյուղատնտեսությունից ստացվող ֆինանսական միջոցներն են, սակայն համայնքաբնակներ հողագործությամբ զբաղվելիս հանդիպում են դժվարությունների կապված ոռոգման համակարգի հետ: Համայնքում գյուղատնտեսության ծավալները մեծացնելու և այն խթանելու համար անհրաժեշտ է ոռոգման ցանցի ընդլայնում և վերակառուցում:<br><br>Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրը բարձրլեռնային է, սահմանամերձ հանդիսանում է «Գեոպրոմայնինգ գոլդ» ՍՊԸ ազդակիր բնակավայր: Գյուղը ունի դպրոց, մանկապարտեզ, նախակրթարան, ինչպես նաև գործում է բուժկետ, վարչական շենք: |

Սոթք բնակավայրը գյուղատնտեսական համայնք է, բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունը և անասնապահությունն է, որն էլ ապահովում է նրանց եկամտի հիմնական աղբյուրը: Համայնքաբնակները հողագործության աշխատանքներ իրականացնելիս հանդիպում են դժվարությունների՝ կապված ոռոգման հետ: Ոռոգման համակարգում առկա խնդիրները բացասական ազդեցություն են թողնում բերքատվության ծավալների, բերքի որակի վրա:

Ծրագրի իրականացմամբ նախատեսվում է կառուցել 488 մ ոռոգման ջրագծի ներքին ցանց, որը կսպասարկի 60 տնային տնտեսության և կոռոգի 80 հեկ հողատարածք:

Ծրագրի ուղղակի շահառուներն են համարվում Սոթք բնակավայրի 1039 բնակիչներից 350-ը, մոտավորապես 60 տնային տնտեսություն (1 թաղամաս):

Նախագծանախահաշվային փաստաթղթերը դեռևս առկա չեն, բայց նախնական ուսումնասիրությունների համաձայն ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 30.353.000 ՀՀ դրամ /կից ներկայացված է իրականացվելիք աշխատանքերի ֆինանսական նախնական գնահատականները, հաշվարկները/:

Ծրագիրը ներկայացված է համայնքի 2022-2026թթ հնգամյա զարգացման ծրագրում, որի հաստատման ընթացքում անցել է հանրային քննարկում:

| | |
|---|---|
| Ծրագրի կատարման ժամկետները | 04.01.2024-31.12.2024<br><br>Ծրագրի ավարտից հետո, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ օգոստոսի 4-ի N 1198-Ն որոշման Հավելված N 1-ի 2-րդ կետով սահմաված ժամկետներում կներկայացվի ծրագրի տարեկան հաշվետվությունը։ |
| Ծրագրի հնարավոր ռիսկերը | Վարդենիս համայնքը ունի նմանատիպ ծրագրեր իրականացնելու փորձ, քանի որ վերջին տարիներին սուբվենցիոն ծրագրերի շրջանականերում իրականացվել և իրականացվում են ոռոգման ջրագծերի կառուցման կամ վերակառուցման աշխատանքներ։<br><br>Վերոնշյալ ծրագրի ռիսկ կարող են լինել ֆորսմաժորային իրավիճակները, երբ անհաղթահարելի ուժի ազդեցությամբ հնարավոր չի լինի իրականացնել ծրագիրը։ |
| | |

**ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**Հայաստանի Հանրապետության Վարդենիս համայնքի մասհանումների ծախսման 2024 թվականի ծրագրի ֆինանսական գնահատականները**

| Հ/Հ | Միջոցառման անվանում | Ծրագրի արժեքը, ընդամենը/հազ. դրամ/ | Պետական բյուջե /հազ.դրամ/ |
|---|---|---|---|
| *1* | *Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրի 488 մետր ներքին ցանցի կառուցում* | *30.353 490 ՀՀ դրամ* | *30.353 490 ՀՀ դրամ* |
| **1.1** | Շինարարական աշխատանք | 29.299.490 ՀՀ դրամ | 29.299.490 ՀՀ դրամ |
| **1.2** | Նախագծանախահաշվային փաստաթղթերի և փորձաքննության ծեռքբերում | 910.000 ՀՀ դրամ | 910.000 ՀՀ դրամ |
| **1.3** | Տեխնիկական հսկողություն | 90.000ՀՀ դրամ | 90.000ՀՀ դրամ |
| **1.4** | Հեղինակային հսկողություն | 54.000 ՀՀ դրամ | 54.000 ՀՀ դրամ |

**ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**